ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ՏԱՎՈՒՇ ԱՄՐՈՑԻ ՆԱԽԸՆԹԱՑ ԵՎ ՆԵՐԿԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր *– Աշոտ Երկաթ, Տավուշ ամրոց, միջնաբերդ, պարիսպներ, միջնադար, հուշարձան, եկեղեցի, ավետարան, պեղումներ*

Տավուշ աշխարհի միջնադարյան կարևոր ամրություններից է Բերդ քաղաքի հարավարևելյան մասում վեր խոյացող Տավուշ բերդը: Տարածաշրջանի միջնադարյան պաշտպանական կառույցների շարքում հուշարձանը լավ պահպանվածներից է: Մինչ օրս հնավայրի տարածքում տեսանելի են ձվածիր ժայռաբլրին կառուցված միջնաբերդի հյուսիսային պարիսպները, ստորին բերդի պարսպապատերի որոշ հատվածներ, ինչպես նաև արևելյան լանջին գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին (աղ. 1, նկ. 1-4): Տարածքի նկատմամբ ամրոցն ունի իշխող դիրք և հայտնի է իր անառիկությամբ, որի մասին վկայում են նաև գրավոր սկզբնաղբյուրները: Ժողովրդի շրջանում հուշարձանը տարածված է Ցլիկ Ամրամի բերդ անվանաձևով, որը կապված է ամրոցի տարածքում ծավալված պատմական իրադարձությունների հետ: Սակայն միջնադարյան պատմիչները մեզ են ավանդել կառույցի իրական անունը՝ Տավուշ ամրոց:

Սույն հոդվածը նվիրված է Տավուշ ամրոցի նախկին հետազոտություններին, գրավոր սկզբնաղբյուրների քննությանը, ինչպես նաև 2020 թ. իրականացված հնագիտական նոր ուսումնասիրությունների նախնական արդյունքներին:

Տավուշ ամրոցը գրավոր սկզբնաղբյուրներում: Ամրոցի հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ: Առաջին անգամ բերդը հիշատակվում է X դարում հայոց կաթողիկոս և պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու կողմից: Ներկայացնելով հայոց արքա Աշոտ Երկաթի (914-928) դեմ ապստամբությունը՝ պատմագիրը նշում է, որ ապստամբների թվում էր նաև Ուտիքի կառավարիչ Ցլիկ Ամրամը: Գրավելով Տավուշ ամրոցը՝ նա ապահով կերպով այնտեղ է պահում իր տան անդամներին. «Եւ ապա առձեռնպատրաստ զամրոցն Տաւշոյ առեալ՝ ի նմա ամրապահեստ առնէր զընտանիս տան իւրոյ»[1]: Աշոտ Երկաթը պաշարում է ամրոցը, սակայն թեժ մարտերում արքունի զորքը պարտություն է կրում և նահանջում:

---

[1] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 321:

1. Տավուշ ամրոցի հյուսիսային պարսպապատը



2. Միջնաբերդի հիմնաժայռը (տեսքը արևմուտքից)

3. Ստորին բերդի պարսպից պահպանված հատված

4. Ս. Աստվածածին եկեղեցի, 1019թ.

Աղյուսակ 1

Ամրոցի մասին հաջորդ հիշատակությունը վերաբերում է XI-XII դարերին: Կիրակոս Գանձակեցին ժամանակի դեպքերը շարադրելիս տարբեր առիթներով բազմիցս անդրադառնում է Տավուշ ամրոցին: Նրա փոխանցմամբ, Կյուրիկե Բագրատունու մահից հետո նրա որդիները՝ Դավիթն ու Աբասը, վրացիներից ճնշվելով, գնում են պարսիկների մոտ, որի պատճառով Տավուշը, Մածնաբերդը և այլ ամրություններ միաժամանակ անցնում են վրացիներին. «Եւ յետ մահուան նորա որդիք իւր դաւեալք ի վրաց, ելեալ ի

տանէ հայրենեաց, գնացին ի պարսիկս Դաւիթ և Աբաս, և առնուն ի նոցանէ ի ժառանգութիւն զՏաւուշ և զՄածնաբերդ և զայլ տեղիս»[1]: Վրաց արքա Դավիթ Շինարարի (1089-1125) ռազմական գործողությունները թվարկելիս Տավուշ ամրոցը վրացիներին անցնելու մասին վկայում է նաև Վարդան Բարձրբերդեցին. «Եւ ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց՝ առեալ զՈւխտիս և զսահմանս իւր՝ զԳագ, զՏէրունականն, զՏաւուշ…»[2]:

Աղվանից կաթողիկոս ընտրելու նպատակով 1139 թ.՝ Հոգեգալստյան տոնին, Կյուրիկյան Դավիթ թագավորը հայոց կաթողիկոսի կողմից լիազորված Սահակ եպիսկոպոսի նախագահությամբ Տավուշ ամրոցում գումարում է եկեղեցական ժողով[3], որտեղ Հայ Աղվանից կաթողիկոս է ընտրվում Գագիկ եպիսկոպոսը՝ վերանվանվելով Գրիգորիս[4]:

Տաշիր-Զորագետի թագավորության վերջին արքա Աբաս Բագրատունու օրոք (1113-1145) ավելի հաճախակի դարձան սելջուկյան ասպատակությունները: 1145 թ. Չոլի ամիրան գրավում է Տավուշ ամրոցը, իսկ Աբասն անցնում է Վրաստան. «Ապա ի միւսում ամին դարձեալ գայր ի գաւառս Առանայ, և փութանակի երթայր ի բերդն Տաւուշ, յորում ամրացեալ էր թագաւորն Աբաս. և բազում ջանիւ ընդերկար պաշարեալ զնա՝ ապա առնոյր զբերդն. Իսկ Աբաս անցեալ գնաց առ թագաւորն վրաց, ի ՇՂԳ թւականին»[5]:

XII դարավերջին Հայաստանն ընդգրկվում է հակասելջուկյան պայքարում, որը գլխավորում էին Զաքարե ամիրսպասալարը և Իվանե աթաբեկը: Հայ-վրացական զինակցության արդյունքում սելջուկներից ազատագրվեցին Հայաստանի կենտրոնական, հյուսիսային և հյուսիսարևելյան բոլոր գավառները[6]: Կիրակոս Գանձակեցին թվարկում է ազատագրված գավառները, բերդերը՝ Հայաստանի հյուսիսարևելյան անառիկ ամրությունների շարքում նշելով նաև Տավուշ ամրոցը. «…առին և նոքա բազում գաւառս ի պարսից և բերդս ամուրս՝ զԳարդման, զՔարհերձ, զԵրգեվանք, զՏաւուշ, զԿածարէթ, զՏէրունականն և զԳագ»[7]:

XIII դարը հայոց պատմության ամենադրամատիկ շրջաններից էր: Դարասկզբի տնտեսական ու մշակութային բուռն վերելքը մասամբ կասեցվում է մոնղոլ-թաթարների արշավանքներով, որոնց հետևանքով ամայանում են բազմաթիվ քաղաքներ, բերդեր, ավերվում և թալանվում հայկական վանքեր ու

---

[1] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 151-152:

[2] Մեծին **Վարդանայ Բարձրբերդեցւոյ** Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 157: Տե՛ս նաև **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** Պատմութիւն Տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 277:

[3] Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 351:

[4] Տե՛ս **Բալայան Մ**., Հայ Աղվանից եկեղեցին, Ստեփանակերտ, 2009, էջ 131:

[5] **Ալիշան Ղ**., Հայապատում, հ. Բ-Գ, Վենետիկ, 1901, էջ 344:

[6] Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, Վենետիկ, 1862, էջ 138:

[7] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 163:

եկեղեցիներ. «Յափշտակեցան ինչք և ստացուածք, և ժլատութիւն բարուց նոցա ոչ երբէք յագեցաւ»[1]: Ըստ պատմական սկզբնաղբյուրների, մոնղոլները Տավուշ ամրոցից հափշտակում են հին ավետարանը և այն վաճառքի հանում: Ավագ երեց Սարգիսը, բազմաթիվ քահանաներ և աստվածասեր մարդիկ միաբանվում են և մեծ փրկագին վճարելով՝ 1238 թ. ետ գնում ձեռագիրը՝ այն փոխանցելով ժամանակի հայտնի աստվածաբան Վանական վարդապետին, որն այդ մասին վկայում է ավետարանի հիշատակարանում. «…զոր փառաւոր աւագէրէց Սարգիս, հասարակ պատուական քահանայիւք և աստուածասէր ժողովրդական տանուտէրք, բազում ծախաւք և աշխատութեամբ գնել ետուն ի մեզ»[2]:

Մոնղոլների կործանիչ արշավանքներից հետո միջնադարյան մատենագիրներն ամրոցի մասին այլևս չեն հիշատակում: Դա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ բերդը կորցրել էր իր երբեմնի անառիկությունը՝ որպես կարևոր ամրաշինական հենակետ աստիճանաբար դուրս մղվելով պատմության թատերաբեմից:

Նախկին հետազոտությունները: Տավուշ ամրոցի անդրանիկ հետազոտությունները կատարել է XIX դարի տեղագիր, հայկական հուշարձանների խոշոր հետազոտող Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը: Իր հեղինակած «Արցախ» աշխատության մեջ Քուստի գավառի բերդերը թվարկելիս նա նշում է նաև Տավուշ ամրոցի մասին, մանրամասն ներկայացնում դրա տեղը, դիրքը, պաշտպանական համակարգը, նկարագրում պահպանված կառույցների մնացորդները և այլն[3]: Մակար եպիսկոպոսի հաղորդումները մեծապես տարբերվում են միջնադարյան պատմիչների տեղեկություններից և կարևոր աղբյուրագիտական հենք են ամրոցի ուսումնասիրության համար:

Տավուշ ամրոցին վերաբերող հետազոտությունների շարքում մեծարժեք են նաև Մխիթարյան միաբանության անդամ, պատմական Հայաստանի բերդերի ուսումնասիրության ասպարեզում հայտնի Միքայել Հովհաննիսյանի հաղորդումները: Սկզբնաղբյուրների հիման վրա նա մանրամասն անդրադարձել է ամրոցի տեղադրությանը, պատմական ընթացքին, նկարագրել առկա վիճակը՝ հիմք ընդունելով Մ. Բարխուդարյանցի տեղեկությունները: Նկատենք, որ Մ. Հովհաննիսյանն անձամբ չի տեսել հուշարձանը և նյութը շարադրել է այդ ժամանակ հրապարակի վրա եղած ուսումնասիրությունների հիման վրա: Այդուհանդերձ, աշխատության մեջ Տավուշ ամրոցին վերաբերող նկարագրությունները ներկայացված են նյութի քննությամբ և վերլուծություններով: Ամրոցի մոտ Աշոտ Երկաթի կրած պարտության առնչությամբ Մ. Հովհաննիսյանը նշում է. «Բերդին պաշտպանութիւնը զօրաւոր էր

---

[1] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 240:

[2] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 203:

[3] Տե՛ս **Մակար եպս. Բարխուտարեանց**, Արցախ, Բաղու, 1895, էջ 356-357:

եւ Աշոտ աւելորդ տեղը արիւն կը թափէր»[1]:

Շամշադինի շրջանի հուշարձանները հաշվառելու, լուսանկարելու, արձանագրությունները ընդօրինակելու և վերծանելու նպատակով 1935 թ. Տավուշ ամրոց է այցելում Կարո Ղաֆադարյանի գլխավորած արշավախումբը: Տեղում իրականացրած տեղազննությունից հետո Կ. Ղաֆադարյանը մանրամասն նկարագրել է հուշարձանի ընդհանուր վիճակը, պահպանված կառույցները, դրանք համադրել նախորդ հետազոտողների տեղեկությունների հետ: Նա հատուկ ուշադրություն է դարձնում նաև միջնաբերդի վերգետնյա նյութերին և կարևորում հուշարձանի պեղումները. «Պեղումները մեծ արդյունք են խոստանում, քանի որ գետնի երեսին թափված են Անիի կուլտուրային պատկանող կարասների դաճազարդ բեկորներ և Դվինի կուլտուրային հատուկ չինի խեցեղեն»[2]:

Ամրոցի առաջին հնագիտական հետազոտությունները կատարվել են 1986-1988 թթ. երջանկահիշատակ Հ. Եսայանի կողմից[3]: Այդ տարիներին պեղումներ են կատարվել երկու հիմնական տեղամասերում՝ միջնաբերդում և ստորին բերդում: Միջնաբերդի պեղումները կենտրոնացվել են գագաթի հյուսիսային հատվածում, որտեղ մշակութային շերտի խորությունը հասել է մինչև 5.2 մ: Ստորին բերդի տարածքում կատարված պեղումներով գրեթե ամբողջությամբ բացվել է Ս. Աստվածածին եկեղեցին և նրան հյուսիսից կից գավիթը:

2020 թ. պեղումները: Ավելի քան երկու տասնամյակ տևած ընդմիջումից հետո՝ 2020 թ. սեպտեմբերի 9-ին, վերսկսվեցին Տավուշ ամրոցի պեղումները: Հուլիսյան մարտական գործողություններից հետո, հրետակոծությունների հետևանքները վերացնելուց զատ, կառավարության կողմից խնդիր դրվեց նաև աշխատանքներ տանել համայնքների զարգացման ուղղությամբ: Բերդի տարածաշրջանում զբոսաշրջության ակտիվացման համար կարևոր նախադրյալ համարվեց Տավուշ ամրոցը (աղ. 1, նկ. 1, 2): Հուշարձանը զբոսաշրջային ակտիվ երթուղու մեջ ներառելու նպատակով ձեռնարկվեցին հնագիտական ուսումնասիրություններ, որոնց պետք է հաջորդեն հուշարձանի ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքները: Հնագիտական արշավախմբի կազմում էին Տ. Ալեքսանյանը (ղեկավար), Հ. Բաղալյանը (ջոկատի պետ), Ա. Հախվերդյանը (ճարտարապետ), պեղող բանվորներ Բերդ քաղաքից:

2020 թ. համար սկզբնապես նախատեսված էր երկարաժամկետ պեղումներ կատարել հնավայրի երեք հատվածում՝ միջնաբերդում, միջնաբերդի ենթադրյալ մուտքի հատվածում և Ս. Աստվածածին եկեղեցու տարածքում: Սա-

---

[1] **Յովհաննէսեան Մ.**, Տաւուշ բերդ, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 497:

[2] **Ղաֆադարյան Կ.**, Շամշադինի 1935 թ. հնագիտական գիտարշավը // Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Երևան, 2007, էջ 302:

[3] **Եսայան Հ., Մաղումյան Ս., Շահնազարյան Ա.**, Տավուշ ամրոցի պեղումները // ««ԼՀԳ», 1991, թիվ 2, էջ 132-141:

կայն սեպտեմբերի 27-ին սկիզբ առած չարաբաստիկ պատերազմի հետևանքով դրանք մնացին անավարտ: Հնագիտական 20-օրյա աշխատանքները կատարվեցին միայն միջնաբերդի և եկեղեցու տարածքում: Միջնաբերդի գագաթին ձեռնարկված պեղումների նպատակն էր պարզել տարածքի կառույցները, կառուցապատման մանրամասները, շինարարական հորիզոնները: Ս. Աստվածածին եկեղեցու պեղումներով խնդիր էր դրվում որոշ չափով ընդլայնել նախկինում պեղված տեղամասերը, ինչպես նաև պարզել ամրոցի հյուսիսային և արևելյան լանջերին հնարավոր կառուցապատման առկայությունը, մշակութային շերտերը և եկեղեցուն հարող հնագիտական միջավայրը:

1. *Միջնաբերդի պեղումները:* Ամրոցի միջնաբերդը զբաղեցնում է մոտ 500 մ^2 տարածք, հյուսիսային մասում կառուցված են կիսակլոր աշտարակներով հզոր պարսպապատեր, իսկ հարավային մասը պաշտպանված է բարձր, ուղիղ կտրվող հիմնաժայռով (աղ. 1, նկ. 2): Միջնաբերդում հնագիտական աշխատանքները սկսվեցին Հ. Եսայանի շերտագրական փոսորակում արած պեղումներից, որը ժամանակի ընթացքում գրեթե ամբողջությամբ լցվել էր հողով (աղ. 3, նկ. 1): Այս հատվածում տեսանելի էր միջնաբերդի հյուսիսային պարսպապատի ներքին ճակատը, որը և դարձավ պեղման ենթակա տարածքի սկզբնական կետ: Որոշվեց միջնաբերդի պեղումները կատարել բերդապարսպի երևացող մասից աջ և ձախ ուղղություններով՝ պատից 4 մ հեռավորությամբ: Պեղվող հատվածներին տվեցինք առանձին համարներ, իսկ շերտերի խորություններին՝ համապատասխան ենթահամարներ (աղ. 2, գծ. 1):

Միջնաբերդի տարածքում վերգետնյա կառույցներ չեն պահպանվել: Առանձին տեղերում հատկապես ակնառու են առկա տարբեր չափերի փոսերը, որոնք հնություններ որոնելու արդյունք են:

Պարսպին կից առանձնացված թիվ 1 պեղավայրում առաջին շերտի խորությունը հյուսիսում հասնում էր 230 սմ, իսկ արևելյան մասում, որտեղ լանջը աստիճանաբար թեքվում է, 130 սմ (աղ. 2, գծ. 2): Հյուսիսային մասի հողաշերտի կտրվածքում հստակ տեսանելի են շինարարական երկու հորիզոններ, որոնք ունեն քարերի և տոփանված աղյուսի շերտի վրա արված հատակներ և թրծած աղյուսների օրինակներ (աղ. 3, նկ. 2): Լավ թրծված աղյուսների բեկորներ և ամբողջական նմուշներ հայտնաբերվեցին նաև պեղումների ընթացքում: Դրանցից մի մասի վրա (չափերն են՝ 22x22x5 սմ) պահպանվել են մատներով արված պարզ գծազարդեր: Գտածոները մեծամասամբ խեցեղեն նյութեր են, որոնց մեջ կան կարմրափայլ թասերի, կճուճների, սափորների բեկորներ և քիչ թվով նաև ջնարակած նյութեր:

Առաջին պեղավայրից աջ բացվեց վատ պահպանված, անկանոն շարվածքով պատի մի հատված: Այն ուղղահայաց դիրքով կպչում է պարսպապատին, ձգվում դեպի հարավ և սահմանագիծ է երկու պեղավայրերի համար (թիվ 1 և թիվ 2):



1. Միջնաբերդի պեղված հատվածները



2. Պարսպապատին կից հատվածները

(չափագրությունները՝ Ա. Հախվերդյանի)

Աղյուսակ 2

Այս հատվածում՝ նույնպես պարսպին կից, հայտնաբերվեց 110 սմ ընդհանուր երկարությամբ գերանի հատված: Այն այրված չէր, հավանաբար եղել է գերանածածկի մասերից և ընկել է փլուզման հետևանքով: Դրանից ոչ հեռու բացվեց կրաբետոնե միջուկի մի հսկա զանգված, որը ևս հաստատում է կառույցի փլուզման վարկածը:

Պեղման համար մեկ այլ տեղամաս (թիվ 3) առանձնացրինք միջնաբերդի արևմտյան ծայրամասում: Այստեղ՝ մոտ 40 սմ խորությունից, բացվեցին ջրավազանի նմանվող կառույցի մնացորդներ, որից պահպանվել էին հարավային և արևելյան պատի հատվածները. չափերն են՝ հս.-հվ.՝ 150 սմ, աե.-ամ.՝ 250 սմ, պահպանված մասերի բարձրությունը՝ 40 սմ: Պատերը և հատակը կրասվաղ են, հատակին պահպանվել են նաև աղյուսակերտ մասերը (աղ. 3, նկ. 3): Հարկ է նշել, որ ամրոցի միջնաբերդը նկարագրելիս Մ. Բարխուդարյանցը գրում է քարուկիր շինությունների հիմքերի և ջրավազանների մասին[1]: Կարելի է պնդել, որ բացված կառույցը հիշյալ ավազաններից մեկն է:

Սրանից հարավ բացվեցին ներկառուցված զույգ թոնիրներ: Ներքին թոնիրի տրամագիծը 70 սմ է, արտաքինի տրամագիծը՝ 90 սմ, երկու թոնիրների միջանկյալ հատվածը՝ 10 սմ, պատերի հաստությունը՝ 4 սմ: Արտաքին թոնրի շրթին արված են մատնեքված ակոսազարդեր, իսկ ներքին մակերեսին՝ ուղղահայաց գծերի արանքում՝ վերից վար իջնող ալիքազարդեր: Սրանցից արևմուտք գտնվեցին մեկ մեծ և երկու ներկառուցված թոնիրներ (աղ. 3, նկ. 4): Հաշվի առնելով վերջիններիս մեծ չափերը՝ ենթադրում ենք, որ դրանք ունեցել են նաև տնտեսական հորի գործառույթ: Այդ մասին են վկայում ջրավազանի և հորերի առկայությունը, ինչպես նաև հայտնաբերված մեծաքանակ խոհանոցային խեցեղենը:

Պեղվող տեղամասը ընդլայնվեց դեպի արևելք՝ տալով նոր համար (թիվ 7): Այս հատվածում շերտերն ամբողջությամբ խառնված են, ակնհայտ են գանձագողության փորձերը և կատարված ավերածությունների հետքերը: Այդ պատճառով այս հատվածից հայտնաբերված հնագիտական նյութերը դասակարգելիս որոշվեց երկու շերտերը ներառել 01 և 02 համարների տակ: Այս հատվածից գտնվել են քարե տարբեր առարկաներ՝ կրաքարե կափարիչ՝ բեկոտված վիճակում (աղ. 3, նկ. 5), երկանքի ստորին քար (աղ. 3, նկ. 6): Առավել ուշագրավ է սպիտակ կրաքարից պատրաստած խոշոր լվացարանի հատվածը: Այն ութանկյուն է, ունի 12 սմ խորություն, կենտրոնում պահպանվել է ջրահեռացման անցքը (աղ. 3, նկ. 7):

---

[1] **Մակար եպս. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 357:

1

2

3

4

5

6

7

Աղյուսակ 3

Մոտ 80 սմ խորությունից բացվեց աղյուսներով շարված վառարան, որի մեջ մրապատ քարեր և աղյուսների բեկորներ էին: Վերջիններիս մեջ կային մեծ չափերի (երկ.՝ 24 սմ, հաստ.՝ 8 սմ) աղյուսների օրինակներ:

Միջնաբերդի արևմտյան ծայրեզրին պեղման համար առանձնացված ևս մեկ տեղամասում (թիվ 6) (աղ. 4, գծ. 1) կատարված աշխատանքների արդյունքում բացվել են աղյուսապատ հատակի մի հատված և հիմնաժայռ: Հյու-

սիս-հարավ ուղղությամբ հայտնաբերվել է քարաշեն պատի մի հատված, որի վերին մասը կրասվաղ էր հիմնաժայռի հարթեցրած մակերեսին հավասար մակարդակով: Այս հատվածի մեջ բացվեց վառանի վերածված կարասի հատակամաս (աղ. 4, նկ. 2):

2. *Ս. Աստվածածին եկեղեցու պեղումները*: Աղոթատունը փոքր, միանավ սրահ է՝ հարավարևելյան մասում փոքր ավանդատնով: Միակ մուտքը հյուսարևմտյան կողմից է (աղ. 5): Հյուսիսային մասում գտնվող եկեղեցու գավիթը կառուցվել է ավելի ուշ և համեմատաբար վատ է պահպանվել (աղ. 6, նկ. 1): Աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է շինարարական արձանագրություն, որում նշվում է, որ Ս. Աստվածածինը կառուցվել է 1019 թ., 1138 թ. կործանվել Գանձակի երկրաշարժից, իսկ մեկ տարի անց վերականգնվել Աբաս Կյուրիկյանի կողմից[1]:

Ի ։ Ճ ։ Ի ։ (120) ԹՈՒՆՆ... ՇԻՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ,
Ի ԱԿԻ ։ ՇՂ ։ (590), ԲԱՐԿՈՒԹ՝ ԻՒՆ ՀԱՍԵԱ՝Լ Ա՝ՍՏՈՒԾՈ՝Յ ԵՒ ԸՂՏԻԵՂԵՐ-
ԱՀՌՋԱԿ ՔԱՂԱՔՆ ԳԱՆՁԱԿ ԿՈՐԾԱՆԵԱՑ. ԵՍ ԱԲԱՍ,
ՈՐԴԻ ԿԻՐԻԿԷԻ ԱՐՔԱԻ, ՆՈՐՈԳԵՑԻ ՎԵՐՍՏԻՆ ՁԱՍՏՈՒԱԾԱՇՆՆՍ
ՀԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄՈ ԵԻ ԵՂԲԱՒՐ Ի՝ՄՈ՝ ԴԱՒԹԻ ԵԻ...

Եկեղեցին կառուցված է բլրալանջին և ժամանակի ընթացքում ծածկվել է հողով: Նախքան 1980-ականների պեղումները հուշարձանից տեսանելի էին միայն քանդված տանիքի հետքերը: Մինչ օրս եկեղեցու արևմտյան պատը արտաքինից կիսով չափ ծածկված է բարձր հողաշերտով:

Ինչպես վերը նշեցինք, եկեղեցու հիմնական պեղումները կատարվել են 1980-ական թվականներին՝ Հ. Եսայանի գլխավորությամբ: Նախքան մեր աշխատանքները կառույցն ամբողջությամբ բացված էր, երևում էին գավիթի և արևելյան հատվածի տապանաքարերի մեծ մասը, և թվում էր, որ արշավախմբի անելիքները սահմանափակվելու էին սոսկ հուշարձանի մաքրմամբ: Սակայն ձեռնարկված պեղումների ընթացքում արձանագրվեցին կարևոր արդյունքներ:

---

[1] Մանրամասն տե՛ս **Եսայան Հ., Սաղումյան Ս., Շահնազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 137-141, **Եսայան Հ.**, Տավուշ ամրոցի պեղումները // ՀԽՍՀՄ-ում 1987-1988 թթ. դաշտահին հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ. թեզիսներ, Երևան, 1989, էջ 94-95, *նույնի՝* Տավուշ ամրոցի պալատական եկեղեցին // ՀՀ-ում 1989-1990 թթ. դաշտահին հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ. թեզիսներ, Երևան, 1991, էջ 116-118:



1. N3 և N6 պեղավայրերը (չափագրությունները՝ Ա. Հախվերդյանի)

2. N 6 պեղավայր

Աղյուսակ 4

Եկեղեցու պեղումների արդյունքները շարադրելիս Հ. Եսայանը նշում է, որ աղոթասրահի հատակը սալարկված էր բազալտ քարերով: Մեր աշխատանքների արդյունքում պարզվեց, որ հատակի սալերը չեն պահպանվել (դրանց որոշ օրինակներ ընկած էին գավիթի տարածքում), եկեղեցու ներսում պեղված հողաշերտի հաստությունը հասավ 20-25 սմ, որի տակից բացվեց տոփանված բնահողը: Հետաքրքիր արդյունքներ են փաստագրվել նաև գավիթի հատվածում՝ 30-40 սմ հաստությամբ հողաշերտ պեղելու արդյունքում: Նախորդ հետազոտությունների ժամանակ գավիթի



2. Ս. Աստվածածին եկեղեցի: Հատակագիծ և կտրվածք
(չափագրությունները՝ Ա. Հախվերդյանի)

Աղյուսակ 5

տարածքում վավերացվել է ընդամենը հինգ տապանաքար: 2020 թ. պեղումների ընթացքում հայտնաբերվեցին նորերը, և դրանց թիվը հասավ 19-ի: Գավիթում պեղված տապանաքարերն ունեն պարզ մշակում, անզարդ են, կան ինչպես խոշոր, երեսը լավ հարթեցրած տապաններ, այնպես էլ փոքր և միջին չափերի, կիսամշակ գերեզմանաքարեր: Հայտնաբերված տապաններից մեկն ունի պարզ խաչային հորինվածք, որը բավականին քայքայված է: Տապանաքարերից մեկի վրա պահպանվել է արձանագրություն՝ հանգուցյալի անունը՝ ԱՍՏՎԱԾ ՈՂՈՐՄԻ ՄԱՄՔԱՆԱՅ (աղ. 6, նկ. 2): Գավիթի հատվածից՝ թափված քարերի մեջ, հայտնաբերվեց նաև արձանագիր տապանաքարի մի հատված, որի վրա պահպանվել են քառատող արձանագրության սկզբնամասերը[1] (աղ. 6, նկ. 3):

ԱՅՍ (Է ՏԱՊԱՆ ԹԻՖ)

ԼԻԶԵ(ՑԻ)…

…ԴԻՈՐ(ԴԻ՞) կամ ՈՐ (ՓՈԽԵՑԱԻ)…

…ԱՄ(Ի)

Գավիթի հատվածում պահպանվել է նաև երկու մասի կիսված ջրաղացքար (տրամագիծը՝ 130 սմ, անցքի տրամագիծը՝ 14 սմ, քարի հաստությունը՝ 20 սմ): Հ. Եսայանի կարծիքով, այն վերաօգտագործվել է իբրև գերեզմանաքար, սակայն մեր պեղումներն այդ տեսակետը չեն հաստատում:

Պեղումներ իրականացվեցին նաև եկեղեցու արևելյան պատի տակ, որտեղ հայտնաբերվեցին վեց ամբողջական, մեծ տապանաքարեր և շիրմաքարերի նմանվող երկու-երեք փոքր սալաքարեր: Արևելյան հատվածում բացված տապանաքարերից առանձնապես նշելի է սպիտակ կրաքարից կերտված երկլանջ գերեզմանաքարը, որի նիստերը բավականին մաշված են, հարավային անկյունը՝ կոտրված:

Ս. Աստվածածին եկեղեցուց հարավ բացվեցին հիմնաժայռի մեջ իջեցված, տարբեր չափերի և խորությունների հորեր ու թոնիրներ: Հարկ է նշել, որ հարավային հատվածի պեղումներն ավարտել ենք միայն նախանշված մակերեսի չափով, և աշխատանքները շարունակելու դեպքում նոր կառուցվածքների հայտնաբերումը լիովին կանխատեսելի է: Հայտնաբերված հորերը երեքն են, կառուցված են միմյանց մոտ (աղ. 6, նկ. 4): Հորերից հայտնաբերվել են մեծաթիվ խեցեղեն նյութեր, ինչից ենթադրելի է, որ դրանք օգտագործվել են իբրև աղբահորեր:

---

[1] Վերծանությունը՝ վիմագրագետ Ա. Հարությունյանի, ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

1



2

3

4

Աղյուսակ 6

Տավուշ ամրոցի նորօրյա պեղումներով ի հայտ է եկել մեծաքանակ հնագիտական խեցեղեն նյութ, որը կամերալ մշակման փուլում է: Գտածոների հետազոտությունը քննության առանձին թեմա է, որին կանդադառնանք ավելի ուշ: Դրանց մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավելի հանգամանալից անդրադառնալու ամրոցի ժամանակագրական սահմաններին, շինարարական և վերանորոգչական աշխատանքներին, ամրոցի պատմական ընթացքին:

Տիգրան Ալեքսանյան, Հարություն Բադալյան – *Տավուշ ամրոցի նախընթաց և ներկա հետազոտությունները*

Տավուշ ամրոցը գտնվում է Բերդ քաղաքի հարավարևելյան մասում: Ամրոցը շրջանի կարևոր ամրություններից մեկն էր, որի մասին հաճախ են հիշատակում պատմիչները հատկապես միջնադարյան Տավուշի կարևոր ամրությունները թվարկելիս: Մինչ օրս հնագույն ամրոցի տարածքում կարելի է տեսնել միջնաբերդի հյուսիսային պարիսպները, որոնք կառուցված են ժայռաբլրի հյուսիսային հատվածում, ստորին բերդի պարսպապատերի որոշ հատվածներ, ինչպես նաև արևելյան լանջին պահպանված Ս. Աստվածածին եկեղեցին: Հոդվածը նվիրված է Տավուշ ամրոցի նախորդ ուսումնասիրություններին, գրավոր սկզբնաղբյուրների քննությանը, ինչպես նաև 2020 թ. իրականացված նոր հնագիտական պեղումների նախնական արդյունք-

ներին: Հնագիտական նյութի հետագա ուսումնասիրությունը հնարավորություն կտա նաև ավելի մանրամասն դիտարկել հուշարձանի ժամանակագրական սահմանները, շինարարական և նորոգչական աշխատանքները և ամրոցի պատմական ընթացքը:

Тигран Алексанян, Арутюн Бадалян – ***Предыдущие и нынешние исследования крепости Тавуш***

Ключевые слова *– Ашот Еркат, крепость Тавуш, цитадель, стены, средневековье, памятник, церковь, Евангелие, раскопки*

Крепость Тавуш расположена в юго-восточной части города Берд. Оплот являлся одним из важных фортификационных сооружений региона, о котором часто упоминают средневековые историки, особенно при перечислении важных укреплений средневекового Тавуша. По сей день на территории древней крепости видны северные стены цитадели, построенные на скалистом холме, некоторые части стен нижней крепости, а также церковь св. Богоматери на восточном склоне. Статья посвящена предыдущим исследованиям крепости Тавуш, изучению письменных источников, а также предварительным результатам новых археологических раскопок, проведенных в 2020 году. В дальнейшем изучение археологического материала даст возможность более подробно охарактеризовать хронологические границы памятника, строительные и реставрационные работы и историческое развитие крепости.

Tigran Aleksanyan, Harutyun Badalyan – ***The Previous and Current Research of Tavush Fortress***

Key Words *– Ashot Erkat, Tavush fortress, citadel, walls, Middle Ages, monument, church, gospel, excavations*

Tavush fortress is located in the southeastern part of Berd city. The monument was one of the important fortifications of the region, which is often mentioned by medieval historians, especially in listing important fortifications of medieval Tavush. To this day, on the territory of the ancient fortress the northern walls of the citadel built on a rocky hill, some parts of the walls of the lower fortress and the church of Holy Mother on the eastern slope can be seen. The article is devoted to the previous studies of Tavush fortress, to the research of written sources, and also to the preliminary results of new archaeological excavations carried out in 2020. Further study of the archaeological material will make it possible to characterize the chronological boundaries of the monument, the construction and restoration work and the historical course of the castle in more detail.

Ներկայացվել է 05.02.2021
Գրախոսվել է 02.03.2021
Ընդունվել է տպագրության 06.07.2021